ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 04.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/28

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.07.2017թ. թիվ 04/27-1/12451-17 գրությամբ «Օրթեզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 26.06.2017թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/6711-17 գրության հիման վրա, 10.07.2017թ. թիվ 04/27-1/12451-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Օրթեզ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Օրթեզ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Օրթեզ» ՍՊԸ-ն 14.07.2017թ. գրությամբ հայտնել է, որ առաջին անգամ մասնակցելով սույն թվականի հունիսի 19-ին կայացած ընթացակարգին, հայտը լրացնելիս տեխնիկական պատճառներով թույլ է տվել սխալ, որի արդյունքում Ընկերության կողմից առաջարկված գները չեն համապատասխանել իրականությանը: Այդ պատճառով «Օրթեզ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց այն չափաբաժինների մասով, որոնց համար առաջարկել է նվազագույն գին և սահմանված կարգով վճարել է հայտի ապահովումը՝ 175 750 ՀՀ դրամի չափով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.07.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 26.06.2017թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/6711-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար կազմակերպված «ԱՍՀՆ-ՀՄԱ-ԾՁԲ-17/26» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում ի թիվս այլ մասնակիցների գնային առաջարկ է ներկայացրել «Օրթեզ» ՍՊԸ-ն, որը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստից հետո՝ 20.06.2017թ. գրավոր դիմել է գնահատող հանձնաժողովին՝ հրաժարվելով պայմանագիր կնքելուց՝ այն չափաբաժինների մասով, որոնց համար առաջարկել է նվազագույն գին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.07.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/28 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/28 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար կազմակերպված «ԱՍՀՆ-ՀՄԱ-ԾՁԲ-17/26» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Օրթեզ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.06.2017թ. ժամը 10:00-ի հայտերի բացման նիստի արձանագրությամբ կայացված որոշմամբ «Օրթեզ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 2-րդ, 4-5-րդ, 7-8-րդ, 13-րդ չափաբաժինների մասով:

3. «Օրթեզ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 20.06.2017թ. գրությամբ հայտնել է, որ առաջին անգամ մասնակցելով 19.06.2017թ. կայացած ընթացակարգին, հայտը լրացնելիս տեխնիկական պատճառներով թույլ է տվել սխալ, որի արդյունքում Ընկերության կողմից առաջարկված գները չեն համապատասխանում իրականությանը:

Նշված գրությամբ «Օրթեզ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին խնդրել է չեղյալ համարել Ընկերության մասնակցության հայտը՝ 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ և 13-րդ չափաբաժինների մասով:

4. Հիմք ընդունելով «Օրթեզ» ՍՊԸ-ի 20.06.2017թ. գրությունը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.06.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացրած որոշմամբ Ընկերության հայտը Ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ և 13-րդ չափաբաժինների մասով մերժել է:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.07.2017թ. թիվ 04/27-1/12451-17 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 26.06.2017թ. թիվ ԱԳ/ԿԲ-4/6711-17 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ***Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:***

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: ***Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Այսպիսով՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար կազմակերպված «ԱՍՀՆ-ՀՄԱ-ԾՁԲ-17/26» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու

նպատակով Ընթացակարգի 2-9-րդ և 13-րդ չափաբաժինների մասով «Օրթեզ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.06.2017թ. ժամը 10:00-ի հայտերի բացման նիստի արձանագրությամբ կայացված որոշմամբ «Օրթեզ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 2-րդ, 4-5-րդ, 7-8-րդ, 13-րդ չափաբաժինների մասով:

Միևնույն ժամանակ Ընկերությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 20.06.2017թ. գրությամբ հայտնել է, որ առաջին անգամ մասնակցելով 19.06.2017թ. կայացած ընթացակարգին, հայտը լրացնելիս տեխնիկական պատճառներով Ընկերությունը թույլ է տվել սխալ, որի արդյունքում Ընկերության կողմից առաջարկված գները չեն համապատասխանում իրականությանը:

Նշված գրությամբ «Օրթեզ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին խնդրել է չեղյալ համարել Ընկերության մասնակցության հայտը՝ 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ և 13-րդ չափաբաժինների մասով, դրանով իսկ հրաժարվելով գնման գործընթացի հետագա մասնակցությունից:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Օրթեզ» ՍՊԸ-ն «ԱՍՀՆ-ՀՄԱ-ԾՁԲ-17/26» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, քանի որ Ընթացակարգի հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.07.2017թ. թիվ 04/27-1/12451-17 գրությամբ «Օրթեզ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00036503) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Օրթեզ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ